02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

11 (1410) • 29 մարտի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Խորհրդակցություն ոստիկանությունում

Մարտի 23-ին ոստիկանությունում տեղի ունեցավ օպերատիվ խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը:

Մասնակցում էին ոստիկանության կոլեգիայի անդամներ, օպերատիվ ծառայությունների ղեկավարներ, մարզային վարչությունների պետեր, կենտրոնական ապարատի ղեկավար կազմն ու ճանապարհային ոստիկանության ստորաբաժանումների պատասխանատուները:

Անդրադառնալով ոստիկանության ծառայողների սոցիալական ապահովման հարցին՝ Վալերիյ Օսիպյանը կարեւորեց խնդրի համալիր լուծման անհրաժեշտությունը՝ այն դիտարկելով խրախուսման համակարգերի միջոցով աշխատանքային եւ կատարողական կարգապահության ամրապնդման եւ ծառայողական պարտականությունների լիարժեք իրականացման համատեքստում:

Ոստիկանության պետը հասարակական կարգի պահպանման եւ հանրային ծառայությունների մատուցման ոլորտում ընդգծելով արտաքին ծառայությունների աշխատանքը՝ նշեց, որ այս բնագավառում անհրաժեշտ է ապահովել ծառայողների պրոֆեսիոնալ ու հաղորդակցական որակների շարունակական կատարելագործում, ինչի գրավականը կանոնավոր ու պարբերական գործնական պարապմունքներն ու տեսական գիտելիքների կիրառմամբ ծառայության արդյունավետության հետագա բարձրացումն է:

Վալերիյ Օսիպյանը նիստի մասնակիցների հետ քննարկեց նաեւ օպերատիվ ծառայությունների գործունեության արդյունքներն ու հանձնարարեց միջոցներ ձեռնարկել բացահայտումների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ՝ օպերատիվ իրավիճակի վերահսկելիությունն ապահովելու գործում շեշտադրում անելով կանխարգելման ու նախականխման աշխատանքների հետագա խթանման վրա:

Խորհրդակցության ավարտին Վալերիյ Օսիպյանը կոնկրետ հրահանգներ ու հանձնարարականներ տվեց մասնակիցներին:

Քանահինգամյա ծառայություն

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչությունը 25 տարեկան է. քառորդդարյա կենսագրություն, որ սկսվեց 1994 թվականի մարտին՝ ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանով: Իսկ նախափորձն ավելի վաղ էր՝ 1990-ին, երբ կազմավորվեց նախարարության լրատվական խումբն ու սկսեց հրատարակվել «02» շաբաթաթերթը:

Ինքնիշխան պետականաշինության, պատերազմի, ներքին կարգուկանոնի հաստատման մարտահրավերների առջեւ հայտնված երկրի գլխավոր հիմնայուններից էր ներքին գործերի նախարարությունը, որի խոսքն ու գործը հանրությանը հասցնելը առավել քան առաջնահերթություն էր դառնում: Այս սկզբունքը դրվեց հանրապետության առաջին գերատեսչական լրատվական կառույցի հիմքում՝ լուսաբանել ՆԳ մարմինների գործունեությունը, նպաստել հանրային իրավագիտակցության ձեւավորմանը, ամրապնդել հասարակություն-ոստիկանություն կապը:

էջ 2

Սպանություն Տիգրան Մեծի պողոտայում

Մարտի 19-ին, ժամը 18-ի սահմաններում, հիվանդանոցից ոստիկանության Էրեբունու բաժին ահազանգեցին, որ բուժօգնության է տեղափոխվել Շիրակի մարզի Նահապետավան գյուղի բնակիչ Համբարձում Եզեկյանը՝ կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած վերքով: Քիչ անց ոստիկանության Էրեբունու բաժին հնչեց երկրորդ ահազանգը՝ 28-ամյա Համբարձում Եզեկյանը, գիտակցության չգալով, մահացել է:

Սպանության հատկանիշներով քրեական գործ հարուցվեց: Սկսվեցին օպերատիվ-հետախուզական ծավալուն միջոցառումներ ու քննչական գործողություններ: Պարզվեց, որ երիտասարդը դանակահարվել էր Տիգրան Մեծի պողոտայում: Դեպքի վայրում հայտնաբերվեցին արնանման հետքեր եւ ծալովի դանակ:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները Էրեբունու բաժնի գործընկերների հետ կարճ ժամանակում պարզեցին կատարվածի մի շարք հանգամանքներ: Նախնական տվյալներով՝ սպանված երիտասարդի եւ Սարի թաղում ապրող, 18-ամյա Աշոտ Գրիգորյանի միջեւ անհիմն վեճ էր սկսվել: Անցորդների ներկայությամբ տեղի ունեցած պարզաբանումն էլ ավարտվել էր դանակահարությամբ: Աշոտ Գրիգորյանը դիմել էր փախուստի, իսկ դանակահարված երիտասարդը «շտապօգնության» մեքենայով տեղափոխվել էր հիվանդանոց:

Օպերատիվ տվյալների հիմնավորման արդյունքում նախաքննական մարմինը որոշում կայացրեց Աշոտ Գրիգորյանին ներգրավել որպես մեղադրյալ: Նրա նկատմամբ հայտարարվեց հետախուզում: Տարված բացատրական աշխատանքի շնորհիվ մարտի 27-ին նա ներկայացավ ոստիկանության Էրեբունու բաժին:

Ի դեպ, պարզվել է, որ Աշոտ Գրիգորյանը նախորդ տարվա դեկտեմբերի 24-ին Սարի թաղի 1-ին փողոցում վիճել էր մի տղամարդու հետ, որին եւս դանակահարել էր՝ առողջությանը պատճառելով ծանր վնաս:

Նախաքննությունը շարունակվում է:

Չարաշահումներ «Հայավտոկայարան»-ում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերով պարզվել է, որ «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության 2012-2018 թթ. գլխավոր տնօրեններն ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող մայրաքաղաքի «Կենտրոնական ավտոկայարան» մասնաճյուղի տարածքում եւ վարչական շենքում տարբեր իրավաբանական եւ ֆիզիկական անձանց հետ կնքել են տարածքներ տրամադրելու վերաբերյալ վարձակալության պայմանագրեր եւ չպահպանելով այդ պայմանագրերի համապատասխան կետի պահանջները՝ հնարավորություն են ընձեռել վարձակալներին, ինչպես եւ դեռեւս չպարզված այլ անձանց եւ կազմակերպություններին օգտվելու ՓԲԸ-ի կողմից վճարվող էլեկտրաէներգիայից: Արդյունքում՝ սպառված էլեկտրաէներգիայի դիմաց «Հայավտոկայարան» ՓԲԸ-ի կողմից վճարվել է շուրջ 43 միլիոն 200 հազար դրամ, իսկ «Կենտրոնական ավտոկայարան» մասնաճյուղի բնականոն գործունեության համար անհրաժեշտ սպառման էլեկտրաէներգիայից ավելի ծախսածի համար հավաքված շուրջ 21 միլիոն 655 հազար դրամը ընկերության դրամարկղ չի մուտքագրվել եւ հաշվառվել է:

Պարզվել է նաեւ, որ «Կենտրոնական ավտոկայարան» մասնաճյուղի նախկին տնօրենը վարչական շենքի երկրորդ հարկում, առանց սահմանված կարգով կնքվող տարածքի վարձակալության պայմանագրի, 2018 թ. հունվարից ինքնակամ, անհատույց օգտագործման համար մի քաղաքացու տրամադրել է 190 քմ տարածքով 6 սենյակ, ինչի հետեւանքով «Հայավտոկայարան» ՓԲԸ-ին պատճառվել է 6 միլիոն 650 հազար դրամի նյութական վնաս:

Հարուցված քրեական գործն ուղարկվել է քննչական կոմիտե:

Ապօրինություններ Ճամլուղում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր, Լոռու մարզային վարչությունների եւ Թումանյանի բաժնի ծառայողները ձեռնարկված միջոցառումներով պարզել են, որ Լոռու մարզի Ճամլուղ համայնքի նախկին ղեկավարը թույլ է տվել ապօրինություններ: 2007 թ. հունվարից հոկտեմբեր համայնքապետարանում աշխատանքի է հրամանագրել ընկերոջը, որն աշխատանքի չի ներկայացել, իսկ նրա անվամբ դուրս գրված 8 միլիոն 300 հազար դրամը յուրացվել է:

2012 թ. փետրվարին աշխատանքի է հրամանագրել եղբորը, որը մինչեւ 2017 թ. հոկտեմբեր աշխատանքի չի ներկայացել, իսկ նրա անվամբ դուրս գրված 6 միլիոն 40 հազար դրամ աշխատավարձը յուրացվել է:

Արդյունքում՝ 2007-2017 թթ. համայնքի բյուջեից հափշտակվել է շուրջ 14 միլիոն 340 հազար դրամ:

Հարուցվել է քրեական գործ:

Յուրացումներ Մարմաշենում

Ազգային անվտանգության ծառայությունից ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա ոստիկանության ԿՀԴՊ վարչության, Շիրակի մարզային վարչության եւ Ախուրյանի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումներով պարզվել է, որ Մարմաշեն համայնքի ղեկավարը, համայնքապետարանի աշխատակիցների հետ նախնական համաձայնությամբ, պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ ու գրառումներ մտցնելով՝ 2018 թ. հունիս եւ հուլիս ամիսներին համայնքի ազատամարտիկների անվամբ որպես պարգեւավճար համայնքի բյուջեից դուրս է գրել 30-50.000-ական դրամ: Դրանք ազատամարտիկներին չեն տրվել եւ յուրացվել են:

Հարուցվել է քրեական գործ:

Համակարգ

Քանհինգամյա ծառայություն

Սկիզբը՝ էջ 1

Այդ սկզբունքը հիմնարար է նաեւ այսօր, երբ լրատվության վարչությունը իրավապահ կառույցի հետ միասին անցել է կայացման ու զարգացման բոլոր փուլերով, ունեցել եւ ձեռքբերումներ, եւ բացթողումներ, իր մասը բերել հանցավորության դեմ պայքարին ու հասարակական կարգի ապահովմանը:

Քսանհինգ տարի առաջ ընդամենը «02» հաղորդումով ու շաբաթաթերթով սկսած հասարակայնության հետ կապի ու լրատվության վարչությունն այսօր հանրապետության երեք վարկանիշային հեռուստաընկերություններով հեռարձակում է նաեւ «Դերթապահ մասի» ամենօրյա թողարկումները, «Կիրակնօրյա հերթապահ մաս»-ի եւ «1 02» հաղորդումները, շաբաթական ռադիոթողարկումները հանրային ռադիոյի եթերում, գործում են պաշտոնական կայքէջը եւ պաշտոնական էջերը սոցիալական կայքերում, զանգվածային լրատվամիջոցների հետ սերտ համագործակցությամբ ապահովվում է լրահոսի հրատապությունը, հանրությանը ծառայություններ մատուցող ոստիկանական ստորաբաժանումներին աջակցում է համացանցային ծրագրերի կիրարկման գործում, ճանաչման ներկայացվող կասկածյալների, հետախուզվողների, անհետ կորածների վերաբերյալ մշտական տեղեկատվությամբ մասնակցում է օպերատիվ ծառայությունների աշխատանքին:

Եվ այս ծավալուն ու բազմակողմ աշխատանքի ուղենիշը կրկին նույնն է՝ ոստիկանության գործունեության հանդեպ հանրային վստահության ամրապնդում, հասարակական իրավագիտակցության բարձրացում, քաղաքացու հետ հետադարձ կապի ապահովում, որն իրականացվում է «թեժ գծերի», թեմատիկ ուղիղ կապի, քաղաքացիների հարցադրումների սպառիչ ու մասնագիտական պատասխանների եւ այլ եղանակներով:

Այս աշխատաոճի հիմքում ոչ միայն լրատվության վարչության բազմամյա փորձն է՝ բազմապատկված արդեն երրորդ սերնդի որոնումներով ու արդիական մտածողությամբ, այլեւ արտերկրյա համանման ծառայությունների հետ համագործակցությունը, մասնագետների մասնակցությունը միջազգային համաժողովներին, դասընթացներին, փորձի փոխանակման տարատեսակ միջոցառումներին: Եվ գնահատանքն էլ հաճախ միջազգային է. հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչությունը բազմիցս հաղթող է ճանաչվել հեղինակավոր միջազգային մրցույթներում ու փառատոներում՝ ներկայացնելով Հայաստանի ոստիկանության գործունեությունն ու ձեռքբերումները:

Եվ, այնուամենայնիվ, առաջնայինը մեր հանրության, մեր քաղաքացու գնահատանքն է: Եվ օրեցօր աճող վստահությունը ոստիկանության հանդեպ, եւ քաղաքացիների հետ համագործակցությունը կոռուպցիայի, կաշառակերության, ապօրինությունների դեմ պայքարում, եւ առարկայական ու արդյունավետ փոխգործակցությունը քաղաքացիական հասարակության կառույցների հետ վկայում են, որ ճիշտ էին աշխատանքի քսանհինգամյա ուղենիշն ու սկզբունքը՝. ոստիկանությունը ծառայում է օրենքին ու քաղաքացուն, եւ այս առաքելության հաջողությունն անհնարին է առանց հասարակության հետ սերտ համագործակցության, քաղաքացու վստահության, համաժողովրդական հավատի, որ արդարությունը պաշտպանված է:

Սրան էր միտված ոստիկանության լրատվական ծառայության աշխատանքը ու շարունակվելու է հաջորդ քսանհինգամյակներում:

«Մասնագիտության» բերումով

Ոստիկանության Արտաշատի բաժնում տեղեկություններ էին ստացվել, որ Արարատի մարզի Շահումյան գյուղի բնակիչ Հրաչիկ Խաչատրյանը եւ սուրենավանցի Արմեն Աբրահամյանը գողություն են անում: Տեղեկությունների իսկությունը ստուգելու նպատակով արված օպերատիվ հարցումներից հետո, մարտի 20-ին, քրեական հետախույզները Խաչատրյանին եւ Աբրահամյանին, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին ոստիկանության Արտաշատի բաժին:

Պարզվեց՝ մարտի 12-ի եւ մարտի 18-ի գիշերը բաց պատուհանով մտել էին Արտաշատի նախկին հախճապակու գործարանի տարածք, հափշտակել պղնձե մալուխ, հաստոցների շարժիչներ, զոդման սարքի պղնձե փաթույթ, այլ սարքավորումներ՝ սեփականատիրոջը պատճառելով 1 միլիոն հինգ հարյուր հազար դրամի վնաս: Հրաչիկ Խաչատրյանն ու Արմեն Աբրահամյանը իրավապահներին ներկայացրին, թե ինչպես են անցել պարսպի վրայով, որ պատուհանով ներս մտել, որտեղից են կատարել գողությունը: Գողոնի մի մասը վաճառել էին, մնացածը Խաչատրյանն իր հողամասում էր թաքցրել:

Հետագա միջոցառումներով պարզվեց, որ մարտի 20-ի գիշերը Հրաչիկ Խաչատրյանը շինությունից շարժիչ էր գողացել:

Նախկինում երկուսն էլ դատապարտվել են: Արմեն Աբրահամյանը համաներմամբ վերջերս էր ազատվել քրեակատարողական հիմնարկից: Բայց հանցավոր ուղին նրանց կրկին ոստիկանություն բերեց:

Քննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«Կանացի» շորթում

Մարտի 19-ին ոստիկանության Բազումի բաժնում 49-ամյա մի կին հաղորդում փվեց: Վանաձորցի կնոջ հայտնածով՝ ծանոթներից մեկն իր մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկություններ ունի եւ դրանք չտարածելու համար իրենից մեկ տարի է՝ պարբերաբար 200 հազար դրամ է պահանջում: Նաեւ պահանջում է տալ օրական 1000 դրամ:

Հաղորդման հիման վրա ոստիկանության Բազումի բաժնում նյութեր նախապատրաստվեցին: Փորձաքրեագետները հատուկ գունանյութով թղթադրամներ մշակեցին՝ դրանց վրա գրելով «շորթում» բառը: Միջոցառմանը ներգրավվեցին ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր եւ Լոռու մարզային վարչությունների ծառայողները:

Մարտի 20-ին 200 հազար դրամը ստանալուց անմիջապես հետո 57-ամյա կինը բռնվեց եւ, շորթում կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանության Բազումի բաժին:

Մշակված թղթադրամները տաբատի գրպանում էին:

Կատարվում է քննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Բացահայտում են Եղեգնաձորի ոստիկանները

Մարտի 24-ին ոստիկանության Եղեգնաձորի բաժնում գողության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Գլաձոր գյուղի բնակիչներից մեկը հայտնում էր, որ իր առեւտրի սրահից գողություն է կատարվել: Վաղ առավոտյան բացել էր խանութն ու տեսել, որ դրամարկղից 95 հազար դրամ են հափշտակել:

Ոստիկանության Եղեգնաձորի բաժնի հետաքննության բաժանմունքում քրեական գործ հարուցվեց: Սկսվեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ դեպքի հանգամանքները եւ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը պարզելու ուղղությամբ:

Եղեգնաձորի քրեական հետախույզները հանցագործությունը բացահայտեցին թարմ հետքերով. դեպքից ժամեր անց հայտնաբերեցին կասկածյալին:

Եղեգնաձորի բնակիչ, նախկինում գողության մեղադրանքով դատապարտված Աշոտ Հունանյանը հայտնաբերվեց մայրաքաղաքի Արշակունյաց պողոտայում եւ բերման ենթարկվեց ոստիկանության Եղեգնաձորի բաժին, որտեղ տվեց խոստովանական բացատրություն: Իսկ փողը ծախսել էր խաղադրույքներ կատարելով:

Հարուցված քրեական գործով նախաքննություն է կատարվում:

Մ. Ս.

Գողություն Քաջարանում

Փետրվարի 28-ի գիշերը Քաջարանի Շահումյան փողոցի շենքերից մեկում բնակարանային գողություն էր կատարվել: Օգտվելով տանտերերի բացակայությունից՝ ինչ-որ մեկը հարմարեցված բանալիով բացել էր բնակարանի դուռը եւ ննջարանի զգեստապահարանից հափշտակել 3 միլիոն 750 հազար դրամ:

Գողության մասին ահազանգը ոստիկանության Կապանի բաժնում ստացվեց օպերատիվ կառավարման կենտրոնից. տուն վերադարձած տանտերը 1-02 էր զանգել:

Դեպքի վայրում իրավապահները համապատասխան ուսումնասիրություններ արեցին: Տուժողը ոչ ոքի չէր կասկածում:

Հետաքննություն իրականացնող մարմինը ձեռնարկեց օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները, եւ ջանքերն ապարդյուն չանցան: Հաղորդումից ժամեր անց գողությունը բացահայտվեց:

Քաջարանի Աբովյան փողոցից, գողություն կատարելու կասկածանքով, ոստիկանության Կապանի բաժին բերման ենթարկվեց Քաջարանի բնակիչ Արթուր Հովսեփյանը: Նա ոչ միայն խոստովանեց, այլեւ քննչական փորձարարության ժամանակ ներկայացրեց, թե որտեղ է թաքցրել գողոնը: Հարեւանի տան մոտակայքում նավթի տարայի մեջ էր պահել...

Հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Գ. Վ.

Բակալավրի կրթական ծրագրով առկա վճարովի ուսուցման ընդունելություն

Ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետում իրականացվում է իրավագիտություն մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրով առկա վճարովի ուսուցում:

Ուսման տեւողությունը 4 տարի է: Արական սեռի սովորողները չեն օգտվում զինապարտության մասին օրենքով նախատեսված տարկետման իրավունքից: Դիմորդներն ընդունելության քննություն են հանձնում երկու առարկաներից՝ «Հայոց լեզու» թելադրություն եւ «Հայոց պատմություն» թեստ:

Ուսման կիսամյակային վարձավճարը 250.000 դրամ է: Շրջանավարտներին շնորհվում է իրավագիտության բակալավրի աստիճան եւ տրվում պետական նմուշի դիպլոմ: Վճարովի հիմունքներով բարձրագույն կրթություն ստացած քաղաքացիները առաջնահերթության կարգով կարող են նշանակվել ոստիկանության միջին խմբի պաշտոններում:

Ուսումնական պարապմունքներն անցկացվում են ժամանակակից միջոցներով հագեցած լսարաններում, նորագույն գույքով կահավորված մարզադահլիճներում, բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից: Տեղեկությունների համար զանգել 010778033, 010770879 հեռախոսահամարներով կամ այցելել www.police.am կամ www.edupolice.am կայքեր:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Հանցագործություն հինգ տարի անց

Ռուսաստանի Դաշնության գործընկերների հետ համագործակցության արդյունքում ՌԴ Սամարա քաղաքում հայտնաբերվեց եւ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության օպերատիվ խմբի ուղեկցությամբ Հայաստան տեղափոխվեց 2014 թվականից խարդախության մեղադրանքով հետախուզման մեջ գտնվող Լեւոն Կարապետյանը: Հանցանք կատարած անձի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմքով կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Իսկ հիմա ներկայացնենք դեպքի որոշ մանրամասներ:

Լեւոն Կարապետյանը, որ վաղուց չէր երեւացել նախկին համակուրսեցու տեսադաշտում, մի օր «Օդնոկլասնիկի»-ով «հյուր» էր գնացել ու սկսել էր պատմություններ հյուսել իր ծանր կացության մասին: Ինքնանպատակ չէր արել: Հենց այդ սրտաճմլիկ հորինվածքն էր համակուրսեցուն գցել ծուղակը: Հորինած պատմությունն էլ բավական գթաշարժ էր: Ո՞վ լսի, որ վաղեմի ծանոթի զավակն ավտովթարի է ենթարկվել, վիրահատության կարիք կա, շտապ փող է պետք ու չշտապի օգնել: Գրավատանը ոսկերիչ աշխատող Լեւոնի՝ ոսկերչական մանրակրկիտությամբ հորինված սցենարն իր ազդեցությունը թողել էր, եւ նա հասել էր նպատակին: Նախկին մտերմուհի համակուրսեցուց դրամ չէր խնդրել, այլ՝ անձնագիր: Ասել էր, որ ուզում է ոսկյա շղթան, ադամանդյա քարով մատանիները գրավ դնել, բայց բանկերում խնդիրներ ունի, եւ իր անձնագրով հնարավոր չէ գործարք անել: Համակուրսեցին խոստացել էր օգնել: Հանդիպել էին, աղջկան էր տվել կեղծ ոսկուց զարդերը եւ գրավատանն աշխատելու փաստը նախօրոք այսպես էր ներկայացրել. «Գրավատան ոսկի ստուգողին վիրահատել են, ես ժամանակավորապես եմ փոխարինում նրան, ինձ որ այնտեղ տեսնես՝ չզարմանաս. ցույց չտաս, որ իրար ճանաչում ենք»: Աղջկան նախապատրաստելուց հետո բաժանվել էին ու «հանդիպել» գրավատանը:

Գործարքը հաջող էր ընթացել: Լեւոնը ստուգել ու կշռել էր իր տված կեղծ ոսկուց զարդերը: Փաստաթղթերը ձեւակերպելուց հետո աղջիկը վերցրել էր յոթ հարյուր հազար դրամն ու դուրս եկել: Նրա հեռանալուց հետո Լեւոնը զանգել էր ու ժամադրել փողոցի մյուս մայթի կրպակների հետեւում: Ապա գնացել, վերցրել էր փողն ու ասել, որ տոկոսները վճարելու համար նախօրոք կհանդիպեն, ինքը փողը կտա, աղջիկն էլ կմուծի:

Գործարքից երկու-երեք օր էլ չէր անցել, երբ ամեն ինչ ջրի երես էր ելել: Գրավատանը նկատել էին ոսկու կեղծ լինելը: Զանգել էին ոսկին գրավադրած կնոջն ու պահանջել՝ կա՛մ բերել գրավադրված մետաղի քաշին համարժեք ոսկի, կա՛մ շտապ վերադարձնել փողը: Խուճապի մատնված աղջիկն էլ իր հերթին էր պահանջել Լեւոնից, որ նա արագ շտկի իրավիճակը, այլապես ինքը կդիմի ոստիկանություն:

Լեւոնը խոստացել էր հարցն արագ կարգավորել: Ու արագ կարգավորել էր իր անհետանալու հարցը:

Տուժողը բավական ուշացումով դիմեց ոստիկանություն, երբ խարդախ համակուրսեցին արդեն լքել էր հանրապետության տարածքը: Խարդախության փաստերով հարուցվեց քրեական գործ:

Լեւոն Կարապետյանին հայտնաբերելու ուղղությամբ հետախուզում հայտարարվեց: Հայտնաբերվեց հինգ տարի անց:

Վարույթը վերսկսված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

«Մարտիության» ավազակություն

Մարտի 8-ին Չարենցավանում ավազակային հարձակում էր կատարվել: 6-րդ թաղամասի 1-ին շենքի բնակարաններից մեկն էր մտել դանակով զինված մի տղամարդ: Տան դուռը բաց էր եղել: Դեմքը դիմակով քողարկած տղամարդը կպչուն ժապավենով կապել էր տանտիրուհու ձեռքերն ու ոտքերը եւ դանակով սպառնալով՝ փող ու ոսկի էր պահանջել: Այնուհետեւ կապկպված կնոջը քարշ էր տվել ննջասենյակ, պահարանից հափշտակել էր 650 հազար դրամի ոսկեղեն:

Հարուցվեց քրեական գործ՝ ավազակության հատկանիշներով: Սկսվեցին օպերատիվ-հետախուզական ծավալուն միջոցառումներ ու քննչական գործողություններ՝ դեպքի հանգամանքներն ու հանցագործությունը կատարած անձի ինքնությունը պարզելու նպատակով:

Տղամարդու հեռանալուց հետո տուժողի կապկպված ձեռքերն ու ոտքերն ազատել էր դեպքի ժամանակ տանը եղած մտերմուհին: Հարձակվողը նրան չէր վնասել, հանգամանք, ինչը չվրիպեց իրավապահների ուշադրությունից եւ հետագայում դարձավ բացահայտման բանալին:

Տուժողի մտերմուհին այդ օրը ծաղիկներով եկել էր նրա մարտի 8-ը շնորհավորելու եւ պարտքը վերադարձնելու: Մոտ տասը րոպե անց տուն էր մտել դանակով զինված տղամարդը՝ օրվա խորհրդին միանգամայն հակառակ նպատակներով:

Ոստիկանության Չարենցավանի բաժնի քրեական հետախույզներն ու նախաքննական մարմնի քննիչները տարբեր վարկածներ առաջ քաշեցին, որոնց իսկությունը պարզելու նպատակով ձեռնարկեցին տարաբնույթ միջոցառումներ:

Վարկածներից մեկի համաձայն՝ դեպքի օրը տուժողին հյուր գնացած մտերմուհին էր օժանդակել հանցագործության կատարմանը: Նախնական տվյալներով՝ նա կնոջ ունեցվածքի մասին հայտնել էր իր ծանոթ Մովսես Նազարյանին, եւ միասին ծրագրել էին ավազակային հարձակում կատարել մարտի 8-ին:

Հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում վարկածը հիմնավորվեց, ինչից հետո իրավապահները ձեռնամուխ եղան նրանց հայտնաբերմանը:

Չարենցավանում ապրող 36-ամյա Կարինե Գրիգորյանին՝ տուժողի մտերմուհուն, մարտի 18-ին ոստիկանները հայտնաբերեցին Չարենցավանում եւ, ավազակային հարձակմանն օժանդակելու կասկածանքով, բերման ենթարկեցին բաժին: Նա ներկայացվեց դեպքի նախաքննությունը վարող մարմնին ու ձերբակալվեց:

Քրեական հետախույզներն օպերատիվ պարզեցին, որ ավազակությունը կատարելու մեջ կասկածվող Մովսես Նազարյանը մեկնել է Ռուսաստան: Բացատրական աշխատանքների շնորհիվ Մովսես Նազարյանը, որը նույնպես Չարենցավանի բնակիչ է, վերադարձավ Հայաստան եւ ներկայացավ ոստիկանության Չարենցավանի բաժին:

Մովսես Նազարյանը կալանավորվել է:

Դեպքի մանրամասները պարզվում են:

Կատարվում է նախաքննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Համաներմամբ ազատվածը

Մայրաքաղաքի Վարդաշեն թաղամասի շենքերից մեկի բնակարանից գողություն էր կատարվել: Օգտվելով բնակարանի դուռը կողպված չլինելու հանգամանքից՝ ինչ-որ մեկը մտել էր տուն, հափշտակել երկու բջջային հեռախոս, դրամապանակ, որի մեջ կար փող, առեւտրի կենտրոնի կուպակային քարտ:

Տուժողը ոստիկանություն չէր դիմել, Էրեբունու բաժնի ծառայողներն էին պարզել եղելությունը, ստացված տեղեկությունների իսկությունը ստուգելու նպատակով զրուցել նրա հետ: Պարզվել էր՝ տեղեկությունները հավաստի էին:

Հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացվեցին: Քրեական հետախույզները նոր տեղեկություն ստացան, համաձայն որի՝ գողությունը հնարավոր է կատարած լիներ Օհանովի փողոցի բնակիչ ոմն Գեւորգ: Ավելի ուշ իրավապահները ճշտեցին ոչ միայն կասկածյալի ինքնությունը, այլեւ պարզեցին, թե երբ եւ որ խանութում է փորձել իրացնել գողոնը:

Գեւորգը Օհանովի փողոցի բնակիչ Գեւորգ Հարությունյանն էր: Հարազատների շրջանում տարված բացատրական աշխատանքի շնորհիվ նա ինքնակամ ներկայացավ ոստիկանության Էրեբունու բաժին: Ի դեպ, համաներմամբ վերջերս էր ազատվել քրեակատարողական հիմնարկից:

Անձնական խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվեց տուժողի բջջային հեռախոսներից մեկը. մյուսը, վաճառելու նպատակով, թողել էր խանութում:

Գողության փաստով հարուցվել է քրեական գործ:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Տեղեկատվություն

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ՝ նորանոր ոլորտներ են ընդգրկում նոր հանցատեսակներ: Մեր երկրում առավել հանդիպողներից են համակարգչային հանցագործությունները. սոցկայքերով ծանոթությունների հետեւանքները հաճախ կարելի է որակել որպես հանցագործություն:

Մարտի 10-ին ոստիկանություն զանգած քաղաքացուհին տեղեկացրեց, որ սոցիալական կայքից ներբեռնել են իր նկարները եւ շանտաժի են ենթարկում: Նա հրավիրվեց ոստիկանության Մարաշի բաժանմունք եւ հաղորդում տվեց, ըստ որի՝ անծանոթ մեկը սպառնում է համացանցում տարածել իր նկարները, եթե նրա հետ սեռական հարաբերություն չունենա:

Ոստիկանության Մարաշի բաժանմունքի ծառայողները ձեռնարկեցին հատուկ միջոցառումներ՝ անհայտ անձի ինքնությունը ճշտելու եւ նրան հայտնաբերելու ուղղությամբ:

Պարզվեց կասկածյալի ինքնությունը. երեւանցի Հայկ Խանսամանյանն էր: Նա հայտնաբերվեց ու կասկածանքով բերման ենթարկվեց ոստիկանության Մարաշի բաժանմունք, որտեղ խոստովանեց արարքը:

Կատարվում է քննություն:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Գործից գործ բացվեց

Մարտի 19-ին ոստիկանության պարեկապահակետային ծառայողները Վանաձորի Տիգրան Մեծի եւ Մյասնիկյան փողոցների խաչմերուկում «ՎԱԶ-21140» մակնիշի կասկածելի մեքենա էին նկատել, կանգնեցրել էին, բեռնախցիկում հայտնաբերել «Մերսեդես»-ի լուսարձակներ, հիշողության սարք եւ գործիքներ:

Մեքենայի վարորդ, Երեւանի բնակիչ Միքայել Մանասյանը բերման ենթարկվեց ոստիկանության Բազումի բաժին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց 16 սմ երկարությամբ ծալովի դանակ: Խոստովանեց, որ լուսադեմին գողություն էր արել Աղայան փողոցի շենքերից մեկի բակում կայանված «Մերսեդես Բենց» մակնիշի մեքենայից:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվել է, որ Միքայել Մանասյանը չորս տարի առաջ, դարձյալ «Մերսեդես» մակնիշի մեքենայից, գողություն էր արել նաեւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում:

Հետաքննությունը շարունակվում է:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ուղղվելու հնարավորություն

2018 թ. դեկտեմբերի 20-ին վանաձորցի Ալվարդ Մեխակյանը ոստիկանության Բազումի բաժնում հաղորդում էր տվել, որ բժշկական կլինիկայի նախասրահից գողացել են իր բջջային հեռախոսը:

Գողություն կատարելու կասկածանքով ոստիկանության Բազումի բաժին բերման ենթարկվեց վանաձորցի Ալբերտ Վարդանյանը: Նրա անձնական խուզարկությամբ իրեղեն ապացույց բջջային հեռախոսը հայտնաբերվեց:

Այդ օրը Ալբերտ Վարդանյանը բժշկական խորհրդատվություն ստանալու նպատակով գնացել էր կլինիկա ու նախասրահի սեղանին նկատել հեռախոսը: Տարածքում մարդ չլինելու հանգամանքից օգտվելով՝ հեռախոսը վերցրել ու հեռացել էր: Վաճառելու մտադրություն ուներ, բայց չհաջողվեց:

Օրեր անց ոստիկանության Բազումի բաժնի աշխատակիցները, գողություն կատարելու կասկածանքով, Ալբերտ Վարդանյանին կրկին բերման ենթարկեցին:

Պարզվեց՝ ներկ գնելու նպատակով մտել էր խանութ: Մինչ վաճառողը զբաղված էր մյուս հաճախորդներով, զննել էր ներկերի տեսականին եւ այդ ընթացքում էլ նկատել, որ դրամարկղը բաց է: «Ընձեռված» հնարավորությունից օգտվելով՝ դրամարկղի 118 հազար դրամը գողացել ու հեռացել էր:

Ստորագրությամբ բաց թողնվելուց օրեր անց, գողություն կատարելու կասկածանքով, դարձյալ բերման ենթարկվեց ոստիկանության Բազումի բաժին:

Այս անգամ օծանելիք գնելու պատրվակով մտել էր իմիջ-կենտրոն եւ նախասրահում դրված պայուսակից դրամապանակը գողացել ու հեռացել էր:

Երեք դեպքում էլ Ալբերտ Վարդանյանին ուղղվելու եւ հանցավոր նախասիրությունից հրաժարվելու հնարավորություն տրվեց, քանզի դիմողները բողոքները չպնդեցին:

Կամակորություն ճանապարհին

Գեղարքունիքի մարզի Արծվանիստ գյուղի անչափահաս բնակիչ Միհրան Սողոմոնյանը գյուղամիջյան ճանապարհով խանութ էր գնում: Քայլում էր ոչ թե մայթով, այլ փողոցի մեջտեղով: Այդ պահին մեքենայով ընթանում էին նույն գյուղի բնակիչներ Գրիգորյան եղբայրները՝ Վարուժանը եւ Մխիթարը: Վարուժանը ձայնային ազդանշան տվեց, որ Միհրանը հեռանա ճանապարհից, սակայն նա ուշադրություն չդարձրեց: Հերթական ազդանշանը եւս անպատասխան թողեց: Ազդանշանները լսում էր, պարզապես ճանապարհը զիջելու մտադրություն չուներ: Պատճառը երկու ընտանիքների վաղեմի անհանդուրժողականությունն էր:

Գրիգորյան եղբայրները մեքենայից իջնելով՝ փորձեցին Միհրանին հասկացնել, որ ճանապարհից դուրս գա, մայթով քայլի: Անչափահասը հակադարձեց: Արդյունքում՝ վիճեցին. Մխիթարը ձեռքերով ու ոտքերով խփեց Միհրանին:

Միհրանը եղելությունը պատմեց հորը, նա էլ կատարվածի վերաբերյալ ոստիկանության Մարտունու բաժնում հաղորդում տվեց:

Քրեական օրենսգրքի 118 հոդվածի (ծեծը) հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Կատարվում է քննություն:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ստի հոգեբանությունը

Որպես կանոն, սուտը եւ գաղտնիքը հանցավոր գործունեության ուղեկիցն են: Հանցագործը, քրեական պատասխանատվությունից խուսափելու կամ մեղքը նվազեցնելու նպատակով, հաճախ փորձում է մոլորության մեջ գցել քննչական մարմիններին՝ դրա համար օգտագործելով ստի զանազան ձեւեր: Փորձում է խեղաթյուրել ճշմարտությունը՝ տարածելով անհիմն հերյուրանքներ: Զանազան դրդապատճառների ճնշման տակ կարող են ստել նաեւ քրեական գործի մյուս մասնակիցները՝ վկաները եւ տուժածները:

Փորձենք վերլուծել ստի էությունը:

Կարելի ասել, որ սուտը շփման ֆենոմեն է, ճշմարիտ իրադարձությունների միտումնավոր խեղաթյուրում, որն անհապաղ ստուգելը դժվար է կամ անհնար: Սուտը գիտակցված խոսքային գործունեության արդյունք է, որը հետապնդում է մոլորության մեջ գցելու նպատակ: Ստի բնույթն այն է, որ մարդը մտածում կամ հավատում է մի բանի, սակայն շփման մեջ գիտակցաբար հայտնում է բոլորովին այլ բան:

Սուտ ասող մարդու նպատակն է տարածել կեղծ հաղորդագրություն՝ խեղաթյուրելով ճշմարտությունը:

Մասնագետներն առանձնացնում են ստի երկու տեսակ՝ թերասություն եւ աղավաղում:

Տեղեկատվությունը լռության մատնելիս մարդը թաքցնում է ճշմարիտ ինֆորմացիան, սակայն վերբալ չի հայտնում դրա մասին: Հաճախ սուտ ասող մարդը նախընտրում է տեղեկատվությունը լռության մատնել, քանի որ դա ավելի շահավետ է եւ հեշտ, քան բացահայտորեն ստելը: Իսկ ահա տեղեկատվության աղավաղման ժամանակ, առանց լավ մշակված «լեգենդի», մշտապես առկա է մերկացվելու վտանգը: Ստելու համար անհրաժեշտ է ունենալ լավ հիշողություն, սակայն դա եւս, որպես կանոն, չի փրկում մեղավորին:

Հոգեբանական հետազոտությունները ցույց են տվել, որ առավել հաճախ ստում են ցածր սթրեսակայունության, տագնապայնության եւ նեւրոտիզմի բարձր մակարդակ ունեցող մարդիկ, որոնք նաեւ հակված են հակասոցիալական արարքների: Միեւնույն ժամանակ, ապացուցված չէ, որ կրթվածության եւ ինտելեկտի մակարդակը ներգործում են սուտ ասելու հաճախականության վրա:

Հետաքրքիր է, որ երբ մարդն օժտված է ուրիշներին հաջողությամբ սուտ ասելու կարողությամբ, դա բացարձակապես չի զարգացնում նրա ունակությունը՝ տարբերել սուտը ճշմարտությունից, երբ խաբում են իրեն:

Սուտը մարդկային կեցության անբաժան մասն է՝ դրսեւորվելով տարբեր իրավիճակներում եւ կախված դրանից՝ այն կարելի է բացատրել տարբեր տեսանկյուններից: Այն կարող է լինել եսասիրական դրդապատճառների հետեւանք՝ ուղղված այլ մարդկանց հաշվին անձնական բարօրություն ձեռք բերելուն: Այսպիսի սուտը հասարակության կողմից արժանանում է խստագույն պարսավանքի:

Սուտը կարող է պայմանավորված լինել նաեւ ազնիվ մղումներով (բժշկի հարկադրված սուտը անբուժելի հիվանդին): Այսպիսի իրավիճակում այն բարոյապես արդարացված է: Որքան էլ պարադոքսային հնչի, սակայն մարդն առանց ստի չի կարող ապրել: Հոգեպես առողջ մարդու համար սուտը պայմանավորված է իրական դրդապատճառներով եւ ուղղված է որոշակի նպատակների: Այդ պատճառով բացարձակ անկեղծությունը գործնականորեն անհնարին է, եւ կարող է դիտարկվել որպես հոգեկան պաթոլոգիա:

Ելնելով դրույթից, որ բացարձակ անկեղծ մարդ գոյություն չունի, ստախոս եւ ճշմարտախոս մարդկանց տարբերությունը կրում է պայմանական բնույթ, որն անհրաժեշտ է ճշգրտել՝ համաձայն իրավիճակի:

Շարունակելի

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

Մանոթ պատմություն

Առավոտյան յոթին մոտ ոստիկանություն է զանգել մի քաղաքացուհի եւ հայտնել, թե խաղատանը օլիգարխների թիկնապահները մարդկանց պատանդ են վերցնում, դանակով սպառնում, խլում փողերը: Որպեսզի ոստիկանները անցնեն ստացվում է նոր ահազանգ, այս անգամ՝ մի տղամարդուց, որը հայտնում էր, թե զենքով ուզում էին իրեն խփել:

Պարզվել է, որ ահազանգողներն ամուսիններ են: Ամուսինը խոստովանել է, որ կնոջն իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ է հայտնել՝ թաքցնելով խաղատանը մեծ գումար տանուլ տալու հանգամանքը: Նաեւ հավելել է, որ ահազանգերում հնչած տեղեկությունները մտացածին են:

Կտակազերծվածը

44-ամյա Մխիթարը հաղորդում է տվել, որ 2018 թ. ամռանը քույրերն ու եղբայրն իրեն ալկոհոլ են խմեցրել եւ տարել նոտարական գրասենյակ, որտեղ ինքը, լինելով անսթափ վիճակում, ստորագրել է ինչ-որ փաստաթղթեր: Արդյունքում՝ զրկվել է ծնողի կողմից իրեն, քույրերին եւ եղբորը կտակված բնակարանների իր մասնաբաժնից:

Ձեռնարկվում են միջոցներ ահազանգողի ազգուտակի տվյալները պարզելու եւ նրանց հայտնաբերելու ուղղությամբ:

Քաղցր գողություն

Ոստիկանություն զանգած 16-ամյա Գուրգենը հայտնում էր, որ սուպերմարկետի անվտանգության աշխատակիցներն իր հետ վատ են վարվում, քանի որ իր մոտից հայտնաբերել են շոկոլադ:

Մեկնած ոստիկաններին անվտանգության ծառայության պետը հաղորդում է տվել, որ Գուրգենը խանութից փորձել է գողանալ երեք հատ «Քինդեր» տեսակի շոկոլադ:

Պատանին բաց է թողնվել առանց շոկոլադի:

Դնարամիտ մայրը

Ոստիկանություն է զանգել 70-ամյա մի կին եւ հայտնել, որ որդին անհանգստացնում է իրեն, ասում է, թե կսպանի, տնից էլ փող է գողացել:

Ահազանգով մեկնած ոստիկանները զրուցել են կնոջ հետ: Նա հրաժարվել է հաղորդում տալուց եւ հայտնել, որ որդին փող չի գողացել: Ըստ նրա՝ հարսնացու գտնելու նպատակով որդին իրենից փող է պահանջել, ինքն էլ նրան սաստելու նպատակով զանգել է 1-02:

Ալկոհոլային ահաբեկություն

Ոստիկանություն է զանգած քաղաքացին հայտնել է, որ՝ ոստիկանության բաժնում ռումբ եմ դրել, մի քանի րոպեից կպայթի:

Պարզվել է, որ ահազանգողը եւ սուտ հաղորդում տվողը 46-ամյա Սեւակն է, իսկ բջջային հեռախոսահամարը պատկանում է նրա ընկերոջը՝ 47-ամյա Սայադին: Երկուսն էլ ներկայացվել են հոգեբուժական հիվանդանոց եւ ենթարկվել փորձաքննության (ալկո-թեստ): Պարզվել է, որ երկուսն էլ գտնվում են ոչ սթափ վիճակում:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ մարտի 21-ից 28-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 24 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր սպանության եւ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, 1-ը՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների փորձի, 1-ը՝ ավազակության, 1-ը՝ կողոպուտի, 1-ը՝ գողության, 2-ը՝ խարդախության, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ կեղծ փողեր կամ արժեքդեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու, 2-ը՝ խուլիգանության, 1-ը՝ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ տարածելու, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 3 հետախուզվող:

Արձանագրվել է 75 ճանապարհատրանսպորտային պատահար. 5 մարդ զոհվել է, 100-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 23 դեպք. 2 մարդ զոհվել է, 24-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Մարտի 25-ին Երեւանի Սարալանջի փողոցում իրար են բախվել «Ինֆինիտի», «Օպել», «Նիսան» եւ «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան»-ի վարորդը եւ երկու ուղեւորները, «Տոյոտա»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մարտի 25-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Էրեբունի եւ Ազատամարտիկների փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել 35-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 25-ին «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Աճառյան եւ 3-րդ փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել 34-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 25-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու փողոցում վրաերթի է ենթարկել 65-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 25-ին Արմավիրի մարզի Արշալույս գյուղում իրար են բախվել «Մերսեդես» եւ «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2107»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 25-ին «ՎԱԶ-21102» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Սեւան քաղաքի Շինարարների եւ Նաիրյան փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել 78-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխել է հիվանդանոց:

■

Մարտի 25-ին «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհի 68-րդ կմ-ին վրաերթի է ենթարկել 15-ամյա պատանու, որը նշված մեքենայով հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

■

Մարտի 26-ին Էջմիածին քաղաքի Մաշտոցի փողոցում իրար են բախվել «Ֆոլքսվագեն» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ: «Ֆոլքսվագեն»-ի վարորդը եւ երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մարտի 27-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Գյումրի ճանապարհի 21-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ բախվել երկաթե պատնեշին. վարորդը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է, իսկ ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 27-ին «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Մյասնիկյան պողոտայում բախվել է կայանված «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի. «Մերսեդես Բենց»-ի ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 27-ին «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Սայաթ-Նովայի պողոտայի եւ Աբովյան փողոցի խաչմերուկում վրաերթի է ենթարկել չորս քաղաքացիների, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մարտի 27-ին «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Չեխովի փողոցում վրաերթի է ենթարկել 10-ամյա աղջկա, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 27-ին, անհայտ ավտոմեքենայի վարորդը Մեղրի-Երեւան մայրուղում՝ Մարմարաշեն գյուղի կամրջի մոտ, վրաերթի է ենթարկել 36-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 27-ին «ԿամԱԶ» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Գյումրի ճանապարհի 102-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել. վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Գովազդի հերացքը

Սկիզբը՝ նախորդ համարում

Գովազդի տեքստը կարեւոր է եւ ունի մոտիվացիոն դեր՝ դրդելով սպառողին իրականացնել իր ցանկությունները՝ կատարելով համապատասխան գործողություններ, ընդ որում՝ գովազդային տեքստի հակիրճությունը ուղիղ համեմատական է դրա արդյունավետությանը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի հեռուստատեսային գովազդը: Ընդհանուր առմամբ, հեռուստածրագրերը, անկախ բովանդակությունից, հեռուստադիտողի վրա ունենում են արտահայտված հիպնոտիկ ազդեցություն՝ առաջացնելով գիտակցության փոխված վիճակներ: Որոշ մասնագետներ հեռուստածրագրերի ազդեցությունը համարում են այնքան ուժեղ, որ նույնիսկ համեմատում են թմրամիջոցների կամ ալկոհոլի կործանարար ներգործության հետ:

Մասնագետների վկայությամբ՝ այսօր բնակչության շրջանում բավական մեծ թիվ են կազմում, այսպես կոչված՝ «հեռուստատեսային մոլուցքով» տառապող մարդիկ, որոնք ջանում են, որքան հնարավոր է, ավելի շատ ժամանակ անցկացնել հեռուստաէկրանների առջեւ, իսկ ոմանց մոտ, հեռուստացույցը միացնելուն պես, ձեւավորվում է խորքուն մտնելու սովորություն: Զարգացող տրանսային վիճակի ֆոնին զուգահեռ ընթացող թեմատիկ հեռուստատեսային ծրագրերը այսպիսի մարդկանց համար կարող են տարբեր բացասական վարքային ծրագրերի առաջացման պատճառ հանդիսանալ, օրինակ՝ կարող են

ձեւավորվել վատ սովորություններ, նեվրոզներ, ընդհուպ մինչեւ հանցավոր գործողությունների կատարում: Կարելի է ասել, որ գովազդի միջոցով առաջացած տրանսային վիճակի համադրումը հեռուստատեսային հիպնոսի հետ առաջացնում է «պայթուցիկ խառնուրդ», որի բացառիկ արդյունավետ լինելուն քաջատեղյակ են, հետեւաբար ֆինանսավորում են գովազդային ձեռնարկատերերը: Զարմանալի չէ, որ վերջին տասնամյակներում հոգեբանները հանդիպում են ավելի վաղ ժամանակներում անհայտ մի նյարդային հիվանդության՝ գնումներ կատարելու մոլագարության, որի զարգացմանը նպաստում է գովազդային շարքերով չափից ավելի տարվելը եւ դրանց կուրորեն վստահելը: Այս հիվանդությունը հիմնականում բնորոշ է ցածր ինքնագնահատական եւ թերարժեքության բարդույթ ունեցող, միայնակությունից տառապող մարդկանց, որոնք չեն կարողանում գտնել իրենց կյանքի իմաստը:

Հեռուստատեսային գովազդի վտանգավոր ազդեցությունից պաշտպանվելու նպատակով խորհուրդ կտանք կրճատել հեռուստացույցի առաջ անցկացրած ժամանակը, գովազդ դիտելիս պահպանել աչալրջությունը՝ միաժամանակ գիտակցելով հրատապ պահանջմունքների գերակայությունը, եւ ընտրել դրանց բավարարման խելամիտ ու ռացիոնալ ուղիներ:

Այսպիսով, կարող ենք ասել, որ գովազդն ունի երկակի իմաստ: Մի կողմից՝ այն տեղեկատվական արդյունավետ միջոց է՝ օգնելու մարդուն բավարարել իր պահանջմունքները, մյուս կողմից՝ օգտվելով այսպիսի «նպաստավոր» իրավիճակից՝ գովազդատուն, մեղմ ասած, չարաշահում է սպառողի վստահությունը՝ գովազդն օգտագործելով սեփական կոմերցիոն հետաքրքրությունների շրջանակում:

Շաբթայ Կալմանովիչի գործը

Սկիզբը՝ նախորդ համարում

1996 թ. Շաբթայ Կալմանովիչը դրամական միջոցներ ներդրեց լիտվական «Ժալգիրիս» բասկետբոլային թիմում: Թիմը մի շարք լուրջ հաջողություններ գրանցեց, ինչի համար Լիտվայի նախագահը Կալմանովիչին պարգեւատրեց շքանշանով: Բիզնեսմենը պնդում էր, որ իրեն շնորհել են բարոնի տիտղոս, ուստի նախընտրում էր, որ իրեն դիմեն Շաբթայ ֆոն Կալմանովիչ եւ փոփոխությունն արձանագրեց իր անձնագրում:

Որոշ ժամանակ անց Կալմանովիչը ստանձնում է մերձմոսկովյան «Սպարտակ» կանանց բասկետբոլային ակումբի ղեկավարությունը՝ դառնալով նրա նախագահը: Նրա գործունեությունը չի սահմանափակվում միայն բասկետբոլով: Ակտիվ մասնակցում է շոու բիզնեսի տարբեր ծրագրերի. կազմակերպում է Մայքլ Ջեքսոնի, Լայզա Մինելիի եւ Խոսե Կարերասի համերգները Ռուսաստանում:

Հետաքննության ժամանակ պարզվում է, որ Կալմանովիչը ծանոթ էր Սոլնցեւյան հանցախմբի ղեկավարների եւ «օրենքով» գող Վյաչեսլավ Իվանկովի՝ Յապոնչիկի հետ: Յապոնչիկը սպանվեց 2009 թ. հոկտեմբերի 9-ին՝ Կալմանովիչի սպանությունից մեկ ամիս առաջ: Ենթադրվում է, որ Յապոնչիկի սպանության պատվիրատուն Կալմանովիչն էր, ինչի համար էլ նրա դեմ իրականացվեց մահափորձ: Օպերատիվ-հետախուզական տեղեկությունների համաձայն՝ Կալմանովիչը քրեական աշխարհի ներկայացուցիչ չէր, սակայն ստիպված էր շոու բիզնեսը կիսել Յապոնչիկի հետ: Ենթադրվում է, որ նա ցանկանում էր վերացնել Յապոնչիկին, որպեսզի միայնակ տնօրինի շոու բիզնեսից ստացվող ահռելի եկամուտները: Հիշարժան է այն հանգամանքը, որ Կալմանովիչը սպանվեց Յապոնչիկի մահվան քառասուն օրը չլրացած:

Որոշ տեղեկությունների համաձայն՝ Կալմանովիչը 1,5 միլիոն դոլար էր նախատեսում քրեական «հեղինակությունների» համար որպես փրկագին: Ենթադրվում է, որ քրեական աշխարհի ղեկավարները մահվան դատավճիռ էին կայացրել, ուստի այդ գումարը չէր կարող փրկել Կալմանովիչին. փրկագնի համար դա «համեստ» գումար էր:

Կալմանովիչի բիզնեսի մեջ էր նաեւ դեղերի ներկրման շուկան: Գործարարն ուներ մի քանի ընկերություն, որոնք մասնագիտացել էին դեղերի ներկրման ոլորտում: Դրանց մեջ նաեւ կենսականորեն անհրաժեշտ դեղերն էին, որոնց համար կառավարությունը հատկացրել էր որոշակի գումար: Կան չհաստատված տեղեկություններ, որ այդ բիզնեսում Կալմանովիչը գործակցել է Իոսիֆ Կոբզոնի հետ:

Շաբթայ ֆոն Կալմանովիչի սպանության գործի հետաքննությունը շարունակվում է:

Աշխարհի ամենաթանկ ատրճանակը

2011 թ. Ամերիկայի Միացյալ Նահանգներում հիմնվել է Cabot Guns զինագործական ընկերությունը, որը մասնագիտացել է M-1911 «Բրաունինգ» կրկնօրինակ ատրճանակների պատրաստմամբ: Այս ընկերության արտադրած ատրճանակի նվազագույն գինը 5 հազար դոլար է: Ատրճանակի բարձր արժեքը բացատրվում է այն հանգամանքով, որ ընկերությունն օգտագործում է գերճշգրիտ սարքավորում եւ յուրահատուկ հումք: Այսպես, օրինակ, «Damascus 1911» ատրճանակն արժեր 50 հազար դոլար, քանի որ պատրաստված էր դամասկոսյան պողպատից:

Ամեն անգամ ընկերության նախագծողները զարմացնում են նորարարություններով: Նրանց պատրաստած ատրճանակները հաճախ արվեստի գործեր են,

Colt 1911 կրկնօրինակ ատրճանակը եւ երկնաքարը

որոնցից քչերը կցանկանան կրակել: Վերջերս ընկերությունը ներկայացրեց աշխարհի ամենաթանկ «Colt 1911» կրկնօրինակ երկու ատրճանակները, որոնք պատրաստվել են մոտ կես միլիոն տարի առաջ երկրի վրա ընկած երկնաքարից:

Ատրճանակներն ամբողջովին երկնաքարից չեն, օրինակ՝ հետադարձ զսպանակը, փողը եւ մի շարք այլ մանր դետալներ: Ընկերությունը որեւէ հաղորդագրություն չի տարածել ատրճանակներից փորձնական կրակելու մասին, բայց հավանական է, որ դրանք դեկորատիվ նմուշներ են եւ առաջին իսկ կրակոցից շարքից դուրս կգան: Ատրճանակները պատրաստելիս երկնաքարը չեն ձուլել, այլ փաշել են: Այդ կերպ ցանկացել են պահպանել նյութի տիեզերական կառուցվածքը:

Երկու ատրճանակների եւ նույն երկնաքարից պատրաստված 30 փամփուշտների արժեքը չորսուկես միլիոն դոլար է:

Պատրաստեց **ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Քրեական օրենսգիրք. սպանություն

Սկիզբը՝ նախորդ համարում

Յուրաքանչյուր սպանություն, ինքնին վերցրած, դաժան հանցագործություն է, բայց օրենքն առանձնացնում է առանձին դաժանությամբ սպանությունը՝ նկատի ունենալով մարդասպանի բացառիկ անողոքությունը, սադիզմը: Առանձին դաժանություն է, երբ կյանքից զրկելուց առաջ կամ սպանության ընթացքում տուժողի նկատմամբ կիրառվում են տանջանքներ, խոշտանգումներ, նրան ենթարկում են ծաղրուծանակի, սպանելուց հետո դիակն անարգում են: Հանցագործությունը թաքցնելու նպատակով դիակի անդամահատումը, սակայն, չի որակվում որպես առանձին դաժանություն: Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների գործերում զգալի թիվ են կազմում երեխաների սպանության դեպքերը:

Ներկայացվող դեպքը տեղի է ունեցել Արմավիրի մարզի Խանջյան գյուղում: Իննամսյա երեխայի լացի ձայնը կտրելու նպատակով հայրը բռունցքով հարվածներ էր հասցրել նրա դեմքին, հետո բերանքսիվայր շրջելով անկողնու վրա՝ շարունակել էր բռունցքներով խփել, մինչեւ փոքրիկը մահացել էր... Պարզվում է՝ մարդասպանը՝ նախկինում մի քանի անգամ դատապարտված Ռուստամ Մանուկյանը, մշտապես բռնության էր ենթարկել կնոջը, դեպքից օրեր առաջ էլ կինը երեխայի հետ հեռացել էր տնից, բայց հետո, անսալով ամուսնու հորդորներին, վերադարձել էր:

Ասացինք՝ երեխայի սպանության դեպքերը որակվում են որպես առանձին դաժանությամբ, մինչդեռ մոր կողմից նորածին երեխայի սպանությունը օրենքը «հասարակ» սպանությունների շարքին է դասում: Այդպիսի առանձնացման հիմքում մի շարք հանգամանքներ կան: Մասնավորապես, ամոթը՝ արտամուսնական երեխայի համար, պսիխոֆիզիկական տառապանքները, նյութական դժվարությունները, բնակարանային ծանր պայմանները եւ այլ անբարենպաստ գործոններ:

Տավուշի մարզի գյուղերից մեկի 21-ամյա բնակչուհին տեղի էր տվել ամուսնացած տղամարդու սիրահետումներին, հետո հղիությունը թաքցնելու նպատակով գրեթե չէր երեւացել ծանոթ-բարեկամների աչքին, իսկ երբ ծնվել էր անցանկալի երեխան, խեղդամահ էր արել ու գցել արտաքնոցը:

Վերջերս նորածնի սպանության դեպք էր արձանագրվել Արմավիրի մարզում:

Երեք անչափահաս երեխաների մայրը հերթական պատահական կապի արդյունքում հղիացել էր, ապա դիտավորությամբ ծննդաբերել էր լոգասենյակում: Անցանկալի երեխայից ազատվելու նպատակով, այսպես ասած՝ օժանդակել էր, որ ծնվելու պահին նրա գլուխը դիպչի սալահատակին: Գլխի շրջանում վնասվածք ստացած նորածինը մահացել էր, իսկ մայրը նրա մարմինը նետել էր աղբարկղը: Դատահոգեբանական փորձաքննության եզրակացությամբ՝ նա հանցանքը կատարել էր մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակում: Նրա նկատմամբ դատարանը կիրառեց համեմատաբար մեղմ պատիժ՝ երկու տարի ժամկետով ազատազրկում:

Քրեական օրենսգիրքն առանձնացնում է նաեւ «հասարակ» սպանության մեկ այլ դրսեւորում՝ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանություն: Այս դեպքում պատիժը սահմանում է արդեն 105 հոդվածը: Ըստ այդմ՝ տուժողի գործադրած բռնության, ծաղրուծանակի, ծանր վիրավորանքի կամ հակաիրավական, հակաբարոյական գործողությունների հետեւանքով հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանությունը պատժվում է առավելագույնը չորս տարի ժամկետով ազատազրկմամբ: Ընդգծենք՝ էական նշանակություն ունի հոգեկան խիստ հուզմունքի հանկարծակի առաջանալը:

Սպանության համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումը: Պատիժը նախատեսում է քրեական օրենսգրքի 108 հոդվածը՝ առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկում:

ՌԴ իրավապահների հետ համագործակցության արդյունքում Մոսկվայում հայտնաբերվեց հետախուզման մեջ գտնվող Արամ Մաթեւոսյանը: 2013 թ. Ամանորի տոներին նա մարզկենտրոնի ամայի փողոցով տուն էր գնում, երբ հարակից զբոսայգուց անսպասելի դուրս է թռչում մի հարբած տղամարդ եւ դանակով սպառնալով՝ փող պահանջում: Արամը փորձում է փախչել, բայց հարբածը հասնում է հետեւից եւ հարձակվում փոքրամարմին անցորդի վրա: Դանակի առաջին հարվածը Արամի ազդրին էր: Ու մինչ կիջներ երկրորդ հարվածը, Արամը հանում է ատրճանակն ու օդ կրակում: Սակայն հարբածը շարունակում է դանակով հարվածելու փորձերը: Երկրորդ հարվածը Արամի ձեռքին էր: Այլընտրանք չունենալով՝ Արամը կրակում է անկառավարելի դարձած տղամարդուն եւ սպանում:

Վեց տարի անց կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվեց: Արամ Մաթեւոսյանին առաջադրված մեղադրանքը քրեական օրենսգրքի 108 հոդվածի հատկանիշներով էր: Նախաքննությամբ եւ դատաքննությամբ ձեռք բերված փաստերով հիմնավորվեց, որ նա գործել էր անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ:

Արամ Մաթեւոսյանը դատապարտվեց մեկ տարի ժամկետով ազատազրկման, բայց պայմանավորված մի շարք հանգամանքներով ազատվեց պատժի կրումից:

Իսկ զենքն օրինական էր:

Սպանությունների շարքում «արտոնյալ» է հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանների անցումով սպանությունը: Պատիժը սահմանում է քրեական օրենսգրքի 107 հոդվածը՝ ազատազրկում առավելագույնը երեք տարի ժամկետով: Պատիժ չի կիրառվում, եթե առանձնապես վտանգավոր ու զինված հանցագործի վնասազերծումը ծայրահեղ անհրաժեշտություն է:

Մասնագետների ուսումնասիրությունները վկայում են, որ քննչական եւ դատական պրակտիկայում հաճախ են հանդիպում սպանությունների որակման հետ կապված դժվարություններ, ինչը կարելի է բացատրել նաեւ նրանով, որ կյանքը միշտ ավելի հարուստ է, քան տեսությունը: Տեսությունը որքան էլ կատարյալ լինի, չի կարող, այսպես ասած՝ մոդելավորել պրակտիկայի բոլոր հնարավոր դեպքերը:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Կացնահարել էր մորը

Մարտի 15-ին ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնից Իջեւանի բաժին ահազանգ ստացվեց, որ Տավուշի մարզի Այգեհովիտ գյուղում որդին կացնահարել է մորը: Ահազանգին արագ արձագանքած Իջեւանի ոստիկանները գան պատշգամբում հայտնաբերեցին 89-ամյա Օսան Սիմոնյանին՝ արնաշաղախ վիճակում: Կինը մահացած չէր. ոստիկանները անհապաղ նրան տեղափոխեցին «Իջեւան» բժշկական կենտրոն: Հոսպիտալացվելուց մեկ ժամ անց Օսան Սիմոնյանը մահացավ. գլխին ստացած կացնի հարվածը կյանքի հետ անհամատեղելի էր...

Կատարվածի հանգամանքները պարզելուց հետո քրեական հետախույզները կասկածանքով բաժին բերման ենթարկեցին 61-ամյա Մարգիս Սիմոնյանին: Պարզվեց, որ մայր եւ որդի կենցաղային հարցերի շուրջ վիճել էին, ինչն էլ հանգուցալուծվել էր սպանությամբ:

Մարգիս Սիմոնյանին ոստիկանները ներկայացրել են դեպքի նախաքննությունը վարող մարմնին: Նա կալանավորվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Թմրամիջոցից կախյալները



Թմրամիջոցների ապօրինի շրջանառության լավագույն կանխարգելումը նման դեպքերի բացահայտումն է, ինչը համապատասխան պրոֆեսիոնալիզմ եւ մասնագիտական հմտություն է պահանջում: Հենց այդպիսի մասնագիտական որակների շնորհիվ օրերս ոստիկանության Արթիկի բաժնի ծառայողներն ապօրինի թմրանյութ պահելու եւ օգտագործելու հերթական դեպքը բացահայտեցին:

Քրեական հետախույզները տեղեկություններ էին ստացել, որ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ ժամանած «Տոյոտա Պրադո»-ի վարորդը եւ ուղեւորները իրենց մոտ ու մեքենայում թմրամիջոց են պահում:

Տեղեկություններն իրացնելով՝ Արթիկի Շահումյան փողոցից, մեքենայով հանդերձ, բերման ենթարկվեցին Հայկավան գյուղի բնակիչ Ժիրիկ Սիրեկանյանը, նույն օրը քրեակատարողական հիմնարկից ազատ արձակված Անատոլի Տերյանը, Արմավիր գյուղի բնակիչ, նախկինում սպանության փորձի համար դատապարտված եւ ամիսներ առաջ համաներմամբ ազատ արձակված Գեւորգ Իսրայելյանը:

Անատոլի Տերյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին մեթադոն եւ պրեգաբալին դեղահաբեր: Գեւորգ Իսրայելյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց օտագործված ներարկիչ: «Տոյոտա Պրադո»-ի զննությամբ հայտնաբերվեցին անհայտ ծագման դեղահաբեր, օգտագործված ու չօգտագործված ներարկիչներ:

Հետաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Հոկիզում

50-ամյա Նունե Մ.-ն բնակվում է Երեւանում՝ Վրացյան փողոցին հարող տարածքում տեղադրված տնակում: Տարածքում գտնվող մեկ այլ տնակում է ապրել գործով տուժող Վալերի Գ.-ն: Նրա հետ Նունեն վերջին շրջանում պարբերաբար վիճել է, պահանջել, որ ազատի տնակը, որտեղ բնակվել էր Նունեի «հովանավորությամբ»:

Ըստ մեղադրանքի՝ Նունե Մ.-ն 2018 թ. հուլիսի 16-ին հերթական բուռն վեճից հետո բենզին է լցրել Վալերի Գ.-ի վրա ու հրկիզել նրան: Կրակի ճիրաններից Վալերիին հաջողվել է ազատել, բայց նրա առողջությանը պատճառվել է ծանր վնաս:

Նունե Մ.-ին մեղադրանք էր առաջադրվել տուժողի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս հասցնելու համար:

Նունե Մ.-ն նախկինում դատվածություն չունի, սակայն ոստիկանությունից տրված տեղեկանքի համաձայն՝ նրա վերաբերյալ 2015-2017 թթ. պարբերաբար նյութեր են նախապատրաստվել ծեծի, անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ մարմնական վնասվածք պատճառելու եւ այլ դեպքերով: Յուրաքանչյուր դեպքում տուժողի բողոքի բացակայության հիմքով բանը չի հասել քրեական գործ հարուցելուն:

Նունեն «հատակում» հայտնվել է կյանքի անբարենպաստ հանգամանքների, հավանաբար նաեւ՝ իր թուլակամության ու ալկոհոլին տրվելու պատճառով:

Դատախազն իր մեղադրական ճառում հաշվի առավ Նունե Մ.-ի վատառողջությունը հաստատող բժշկական փաստաթղթերը, նաեւ կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը՝ միջնորդեց նրան մեղավոր ճանաչել քրեական օրենսգրքի 112 հոդվածի 1-ին մասով եւ դատապարտել 4 տարի ազատազրկման, նրա նկատմամբ կիրառել համաներման ակտ ու ազատել պատժից:

Դատարանը Նունե Մ.-ին դատապարտեց 3 տարի ազատազրկման, նրա նկատմամբ կիրառեց համաներման ակտի համապատասխան դրույթն ու ազատեց պատժից:

Նունեն տուժողի եւ դատական նիստին ներկա՝ իր միջավայրի մի քանի անձանց հետ դուրս եկավ դատարանից՝ վերադառնալու նույն տարածք՝ նույն կյանքին...

Գոհար ՔԱԼԱՇՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Անչափահասները

Իրավախախտում կամ հանցագործություն կատարած անչափահասների հիմնախնդիրը ոստիկանության համար առանցքային է, այդ ուղղությամբ տարվող բազմաբնույթ կանխարգելիչ միջոցառումները՝ մշտական են: Մասնավորապես՝ դպրոցներում պարբերաբար կազմակերպվում են համապատասխան թեմաներով հանդիպում-զրույցներ, աշակերտներին ներկայացվում են հանցավոր երեւույթների վտանգավորությունն ու հետեւանքները: Հանդիպում-զրույցներ են կազմակերպվում նաեւ մանկավարժների ու ծնողների հետ՝ համացանցում տարածված վտանգավոր, զանցանքների ու հանցանքների, նաեւ ինքնասպանության դրդող խաղերի, դրանց ազդեցության, վտանգավորության վերաբերյալ: Միջոցառումներ են անցկացվում մուրացկանությամբ եւ թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հայտնաբերման եւ, շահագրգիռ գերատեսչությունների ու կազմակերպությունների հետ համագործակցելով, նրանց հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ:

Ոստիկանությունը չափազանց կարեւորում է անչափահասների իրավական դաստիարակության, նրանց հանցավորության մարտահրավերներից զերծ պահելու խնդիրը, բայցեւայնպես լուծման կարեւոր բանալին առաջին հերթին ընտանիքի՝ ծնողների ձեռքին է:

Հունվարի սկզբներին ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում գողությունների վերաբերյալ ահազանգեր ստացվեցին: Թիրախը հիմնականում սրճարաններն ու արագ սննդի կետերն էին, որոնցից մեկի տեսագրող սարքը ֆիքսել էր հանցավորներին: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ նրանցից մեկի ինքնության վերաբերյալ տեղեկություն ստացվեց, իսկ հետո կասկածյալը՝ 16-ամյա Արմանը, բերման ենթարկվեց եւ խոստովանեց. մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում երեսունից ավելի գողություն էր արել: Անչափահաս լինելու հանգամանքով պայմանավորված՝ պատանին հանձնվեց ծնողների հսկողությանը: Իսկ օրեր անց, ավելի ստույգ՝ փետրվարի 5-ի գիշերը ծնողների հսկողությանը հանձնված պատանին հերրթական գողությունն արեց, այս անգամ՝ հասակակիցներ Գոռի ու Հայկի հետ:

Կոտայքի մարզի Նոր Արտամետ գյուղի դպրոցից գողության հեղինակները նույնպես անչափահասներ էին՝ նույն դպրոցի աշակերտներ Վահանն ու Վարդանը: Կոտրել էին տնօրենի աշխատասենյակի դուռն ու գողացել համակարգիչ, հեռախոս, էլեկտրական ջեռուցիչ: Ոստիկանությունում պատանիները խոստովանեցին՝ օրեր առաջ գողություն էին արել նաեւ գյուղի բուժամբուլատորիայից:

Հունվարի 14-ին գիշերային շրջիկ ծառայության ընթացքում պարեկապահակետային ծառայության ոստիկանները Ավետիսյան փողոցում բռնեցին վճարային տերմինալից գողության փորձ կատարող երկու պատանիների՝ Էդմոնին ու Հակոբին:

Դեկտեմբեր-հունվար ամիսներին մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում՝ փողոցում, բակերում կայանված մեքենաներից գողություններ էին կատարվում: Գործելաոճը նույնն էր. հիմնականում խորհրդային արտադրության մեքենաներից մարտկոցներ էին գողանում:

Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի անչափահասների գործերով ծառայության աշխատակիցները օպերատիվ տեղեկություններ ստացան, որ Քանաքեռ թաղամասի անչափահաս բնակիչներ Էրիկն ու Արթուրը գողություններ են անում: Տեղեկությունները հիմնավորելուց հետո բացատրական աշխատանքներ անցկացվեցին պատանիների հարազատների հետ, ինչի արդյունքում Էրիկն ու Արթուրը ներկայացան ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին եւ խոստովանեցին: Նոր Նորք, Արաբկիր եւ Կենտրոն վարչական շրջաններում «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենաներից մարտկոցներ էին գողացել, իսկ Սարկավագի փողոցի արհեստանոցից՝ էլեկտրական շարժիչ, արհեստագործական ու շինարարական տարբեր ապրանքներ, գունավոր մետաղներ:

Այս պատանիները նույնպես հանձնվել են ծնողների հսկողությանը:

Քրեական օրենսգրքի 165 հոդվածը պատիժ է նախատեսում անչափահասին հանցանքի կատարման մեջ ներգրավելու համար: Չարենցավան քաղաքի բնակիչ Միհեր Պետրոսյանը քրեական պատասխանատվության է ենթարկվելու ոչ միայն գողության, այլեւ անչափահաս Գոռին հանցանքի մեջ ներգրավելու համար: Գողությունը կատարվել էր Սեւան քաղաքի Նալբանդյան փողոցի խանութից:

Ներկայացվող դեպքը, սակայն, առանձնահատուկ է:

Ոստիկանության Վաղարշապատի բաժնում գողության ահազանգերի հետքերով ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում անչափահասների գործերով ծառայության աշխատակիցների տեսադաշտում հայտնվեց 14-ամյա մի պատանի: Կասկածները հիմնավորելուց հետո նա ներկայացվեց ոստիկանության Վաղարշապատի բաժին: Խոստովանեց: Պարզվեց, որ պատանուն գողությունների դրդողը վերջերս համաներմամբ ազատված հորեղբայրն է: Իր հանդեպ ցուցաբերած մարդասիրությունը, փաստորեն, ի չարս էր գործադրել. եղբոր 14-ամյա որդուն սովորեցրել էր «մասնագիտության» նրբությունները եւ դրդել գողությունների: Պատանին գողացել էր ու գողոնը հանձնել հորեղբորը:

Որպես ամփոփում. ոստիկանության եւ շահագրգիռ գերատեսչությունների կողմից մշակվում եւ իրականացվում են կանխարգելիչ միջոցառումներ, ծրագրեր եւ այլն: Բայց նույնիսկ լավագույն ծրագրերը դատապարտված են անհաջողության, եթե ծնողն իր հերթին ճիշտ ու սրտացավ վերաբերմունքով, իր ուշադրությամբ չկանգնի երեխայի կողքին: Եթե ծնողն իր կարեւոր գործերից ամենակարեւորը սեփական երեխայով զբաղվելը չդարձնի:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

2018 թվականի ընթացքում, հանցավորության ընդհանուր աճի պարագայում, 44 դեպքով նվազել է անչափահասների կողմից կատարված հանցագործությունների թիվը (2017 թ.՝ 403, 2018 թ.՝ 359 դեպք): Արձանագրվել է նաեւ հանցագործություն կատարած անչափահասների թվի նվազում (2017 թ.՝ 341, 2018 թ.՝ 324 անձ):

Ուշադրությունից դուրս դեռահասներ

Օրերս մթերային խանութում տեղադրված տերմինալի մոտ հանդիպեցի մոտ տասնչորս տարեկան պատանու: Թվաց՝ հեռախոսն է լիցքավորում: Սպասում էի վերջացնի, բայց նա ինչ-որ թիվ սխալ էր հավաքում, եւ գործարքը չէր ստացվում: Դարցրեցի՝ օգնե՞մ: Նա խուճապի մատնված՝ տերմինալից հեռացավ: Մինչ սարքն ավտոմատ կվերադառնար գլխավոր էջ, հասցրեցի նկատել, որ պատանին «vivaro.am»-ում էր ցանկանում գործարք կատարել: Կասկած չունեմ, որ ծնողներից գաղտնի էր խաղադրույք կատարում:

Ներկայացնենք մեկ այլ դեպք, որով քննություն է կատարվում:

16-17 տարեկան տղաներն, իհարկե, անձնական հարցեր կարող են ունենալ, եւ այդ տարիքում նրանց ամենաանձնական հարցին անգամ պետք է ծնողները, որեւէ մերձավոր մեծահասակ տեղյակ լինեն: Բայց նրանք, որպես կանոն, նման հարցերում չեն անկեղծանում՝ չգիտակցելով, որ դրանք ինքնուրույն կարգավորելու հմտություն չունեն: Եթե տվյալ դեպքում տղաներն ունենային ճիշտ խորհրդատու, երեկոյան ուշ ժամի չէին հանդիպի մի հետնաբակում ու այնպիսի ծեծկռտուք հրահրեին, որ երկուստեք վնասվածքներ ստանային: Իսկ հետեւանքներով արդեն զբաղվեր ոստիկանությունը...

Փաստով քրեական գործ է հարուցվել:

Ռիտա ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Թմրամիջոցի հայտնաբերում

Մայրաքաղաքում ապօրինի թմրաշրջանառության դեմ պայքարի, այսպես ասած՝ առաջատարներից են ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները: Օրերս նրանք օպերատիվ ճանապարհով պարզել էին, որ 32-ամյա Օնիկ Սահակյանը թմրամիջոց է պահում: Տեղեկությունն իրացրին՝ համագործակցելով ոստիկանության Կենտրոնական բաժնի գործընկերների հետ:

Օնիկ Սահակյանը բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին սփայս եւ կրիստալ թմրանյութեր: Հայտնաբերվեց նաեւ ծալովի դանակ: Օնիկ Սահակյանը մեքենայի սրահից իրավապահներին ներկայացրեց նաեւ ատրճանակ:

Հարուցված քրեական գործի շրջանակներում ձեռնարկվեցին հետախուզական միջոցառումներ ու քննչական գործողություններ: Պարզվեց, որ Օնիկ Սահակյանը թմրամիջոցը ձեռք էր բերել Անուշ Մելքոնյանից: 45-ամյա կինը հայտնաբերվեց ու ձերբակալվեց: Նրա բնակարանի խուզարկությամբ հայտնաբերվեց մեթամֆետամին:

Ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները շարունակում են միջոցառումները՝ Անուշ Մելքոնյանի տնից հայտնաբերված թմրամիջոցի ձեռքբերման աղբյուրը պարզելու ուղղությամբ:

Կատարվում է նախաքննություն:

Հրաժարում ապօրինի զենքերից

Ապօրինի զենք-զինամթերքի կամավոր հանձնման ուղղությամբ բնակչության հետ տարվող բացատրական աշխատանքը հետապնդում է նաեւ հանցագործությունների ու դժբախտ պատահարների կանխման նպատակ:

Մարտի 13-ի գիշերը ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի քրեական հետախույզների, համայնքային ոստիկանների եւ վետերանների խորհրդի բացատրական աշխատանքի շնորհիվ մի կին կամավոր հանձնեց մեծ քանակությամբ զենք-զինամթերք: Ըստ նրա՝ գտել էր Կոտայքի մարզի Քարաշամբ գյուղի տներից մեկի խորդանոցում: Տունը պատկանել էր Արցախյան ազատամարտին մասնակցած եղբորը, որը մահացել էր 2014 թվականին:

Արդյունավետ էր նաեւ ոստիկանության Գավառի եւ Մարտունու բաժինների ծառայողների բացատրական աշխատանքը: Անցած շաբաթ Գավառի բաժնում արձանագրվեց ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման մի քանի դեպք: Բացատրական աշխատանքների շնորհիվ Գեղարքունիքի մարզի Լճափ գյուղում ապրող 60-ամյա մի տղամարդ բաժին բերեց նռնակներ եւ փամփուշտներ: Նրա հայտնածով՝ զինամթերքը պատկանել էր տարիներ առաջ մահացած հորը: Բացատրական աշխատանքների շնորհիվ Գավառի ոստիկանություն եկած 29-ամյա տղամարդը հանձնեց պայթուցիչով նռնակ, թմբուկավոր ատրճանակ՝ լիցքավորված 7 փամփուշտով՝ հայտնելով, որ դրանք պատկանել են տարիներ առաջ մահացած պապին: Այս դեպքերում եւս ապօրինի զենք-զինամթերքը կամավոր հանձնած անձանց քրեական պատասխանատվություն չի սպառնում:

Ոստիկանության Մարտունու բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ մարտի 14-ին արձանագրվեց ապօրինի զենք-զինամթերքի կամավոր հանձնման հինգ դեպք: Նախ բաժին եկան Զոլաքար գյուղի երկու բնակիչ, որոնցից մեկը ոստիկաններին հանձնեց «ՌՊԳ» տեսակի հակատանկային նռնականետ ու արկեր՝ հայտնելով, որ դրանք պատկանել են Արցախյան ազատամարտին մասնակցած ու տարիներ առաջ մահացած հորը: Մյուս տղամարդը ոստիկաններին հանձնեց պայթուցիչով նռնակ, հրացան եւ փամփուշտներ՝ հայտնելով, որ դրանք պատկանել են հանգուցյալ պապին: Արծվանիստ գյուղում ապրող մի տղամարդ էլ ոստիկանության Մարտունու բաժին բերեց 1998-ին մահացած հոր ակոսափող հրազենը: Վերին Գետաշենում ապրող մի տղամարդ եւս հանգուցյալ հոր հրացանը բերեց ոստիկանության Մարտունու բաժին: Հանգուցյալ հորը պատկանած հրացանը երկու տարի ապօրինի պահելուց հետո բաժին բերեց նաեւ Վարդենիկ գյուղի մի բնակիչ:

Վերստին կոչ ենք անում ապօրինի ռազմամթերք պահողներին՝ կամավոր ներկայացրեք ոստիկանություն եւ ազատվեք քրեական պատասխանատվությունից:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Խորհրդային ֆիզիկոս
Հունգար երգահան
Ականատ
Ջեկի ...
Գերման. փիլիսոփա
Ծաղիկ
Չինվ. համազգեստ
Մարզական նավակ
X
... երաժշտություն
... Տերտերյան
Նպաստ
Քննական թերթիկ
Առեւտրի կետ
Փողային նվագախումբ
Օլիմպ. խաղեր-2000
Հունգ. բանաստեղծ
Օնորե դը ...
Ռուս ծովակալ
... Սարգսյան
Կիսալուսին
Նոտագր. նշան
Հերբերտ ... Կարայան
Քաղաք, Գանա
Դեմիրճյան, պիես
Միապետ
Հեռուստաալիք
Բաթու ...
Պարս
Լոնդոն
Մոռացության գետ
Գիշեր
Իտալ. օպերային երգչուհի
Տիբեթի շրջանի կենտրոնը
Դրախտ
Ավտոմեքենայի մաս
Ճապոնական օղի
Եղջերու
Ամբողջի բաժին
... լեզու
Կաբուկի
Գետ, Լատվիա
Տարի
Լեհ գրող
Պեպոյի քույրը
Զորամիավորման պետ
... Ցզեդուն
Գրագիր
Հաշվիչ տախտակ, Հին Հունաստան
Թռչուն
... Աղթամարցի
Քեոփս, 147 մ
Երկնային մարմնի ուղի
Թանկ քարերի կշռաչափ
Ժ. Վեռն, հերոս
Իտալ. ֆուտբոլիստ
Լիճ, Աֆրիկա
Խարտյաշ
Ներշնչանք
... Ասրյան
Շինության ուղղաձիգ մաս
Մեխակ, մանուշակ
Խմիչք զամբիկի կաթից
... Բալբոա
Մողես
Կարծր, բնափայտով ծառ
Եղջյուր
Կարմրախայտ
Մեհյան, կռատուն
Ֆրանս. բժիշկ, նոբելյան. դափ.
Կմախքը գերանդիով
Տոգո
Ալֆա, գամա
Բնածին արատ մաշկի վրա
Շոգ եղանակ
Ջենիֆեր ...
Քաղաք, Իտալիա
Մոնիկա ...
Միրգ
Շինանյութ
«...-լալա Մահարի»
Մարզ, ՀՀ
Հայկ. աստվածուհի
Քիմ. տարր
Փորձառու մարզիկ
Խավար
Անրի ...
Ֆրանս. գեղագետ
Գավառ, Այրարատ
Բուդդայական քուրմ
Նոտա
Համաստեղություն
Ուստիկանական ...
Գետ, Ղազախստան
Ցուց. դերանուն
... Մելիքյան
Արքայի բազկաթոռ
Գետի ծյուղավորում
Արագիլ
Պարսիկ թագավոր
«Հայր ...»
Կիսում է երկրագունդը
«Նոյ»
Լոլիտա ...

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ապրիլյան 29.03 - 04.04

Խոյ - Հաջողության կհասնեք, եթե չլսեք չարամիտ մարդկանց խորհուրդները:

Ցուլ - Ձեր հմայքի շնորհիվ կկարողանաք հաստատել նոր ծանոթություններ:

Երկվորյակ - Հակված եք հավատալու առաջին տպավորությանը, ինչը խաբուսիկ է լինելու:

Խեցգետին - Մեծ նշանակություն կտաք ձեր ռոմանտիկ երեւակայությանը, իսկ իրականության մասին նույնիսկ չեք մտածի:

Առյուծ - Կսիրահարվեք, եւ այդ հարաբերությունները կզարգանան մեծ արագությամբ:

Կույս - Նույնիսկ ամենաբարդ հանգամանքների ժամանակ կպահպանեք լավատեսությունը, ինչը կփոխանցվի մյուսներին:

Կշեռք - Անձնական կյանքում խնդիրներ չեն առաջանա, հնարավոր են միայն մանր թյուրիմացություններ:

Կարիճ - Շաբաթը բարենպաստ կլինի ինչպես գործնական, այնպես էլ ռոմանտիկ ծանոթությունների համար:

Աղեղնավոր - Սիրելիի հետ հարաբերություններում կարող են խնդիրներ ծագել. նա դժգոհություն կարտահայտի:

Այծեղջյուր - Սովորականից զգացմունքային եք լինելու, եւ սիրելիի հետ հարաբերություններում եղած շատ բաներ սրտին մոտ կընդունեք:

Ջրհոս - Հնարավոր են ծանոթություններ, որոնք օգտակար կլինեն նաեւ գործնական տեսակետից: Իսկ անձնական կյանքը հետին պլան կմղվի:

Ձուկ - Շաբաթը լավ է լինելու ընտանեկան խնդիրների լուծման, հարազատների հետ ցանկացած ձեռնարկումների համար:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.e1-c3 b2:d4 2.c5:e7 x

Խնդիր N2 1.a3-b4 a5:e1 2.g1-f2 e1:g3 3.h2:h6 x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու
Հայաստանի չեմպիոն,
IDF վարպետ,
սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 28.03.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: